



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

15.09.2023թ.

ՀՀ ԱԺ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Առաքելյան,

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Ձեզ եմ ներկայացնում «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (Պ-614-08.06.2023,08.09.2023-ԱռՀ-011/1) օրենքի նախագծի վերաբերյալ հետևյալ առաջարկությունները և հիմնավորումները:

Առդիր՝ 3 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախագծի Հոդված 2-ի առաջարկվող տեքստի «համապատասխանության հավաստագրի (ավտորիզացիոն նամակի) եւ ծագման սերտիֆիկատի առկայության դեպքում» բառերը փոխարինել «բժշկական արտադրատեսակի յուրաքանչյուր սերիայի (խմբաքանակի) համար որակի համապատասխանության հավաստագրի, եթե կիրառելի է, կամ արտադրատեսակի որակը հավաստող այլ փաստաթղթի առկայության դեպքում» բառերով:
2. Նախագծի Հոդված 3-ի «տասներորդ օրը» բառերը փոխարինել «վեց ամսյա ժամկետի ավարտից հետո» բառերով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ներկայացված առաջարկները ուղղված են առաջարկվող Նախագծից բխող ռիսկերի նվազեցմանը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, թե ինչ է ավտորիզացիոն նամակը: Այն որևէ կերպ չի նույնականացվում համապատասխանության հավաստագրի հետ, որը նույնպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, և հետևաբար տարօրինակ է դրանք մեկը մյուսով փակագծերով բացատրելը: Համապատասխանության հավաստագիրն իր հերթին պրակտիկայում սովորաբար նույն բանն է նշանակում, ինչ ծագման սերտիֆիկատը: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47.2-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերին և «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 7-րդ հավելվածի 50-56-րդ կետերին համապատասխան ՀՀ կառավարության կողմից ընդունված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2023 թվականի մարտի 30-ին ընդունված թիվ 429-Ն որոշման մեջ հղում կա «որակի համապատասխանության հավաստագիր» հասկացությանը, որը վերաբերում է բժշկական արտադրատեսակի կոնկրետ խմբաքանակին: Ավտորիզացիոն նամակները սովորաբար հանդիսանում են բժշկական կամ այլ տեսակի ապրանքներ արտադրողների կողմից այլ պետություններում գործունեություն ծավալող ընկերություններին իրենց արտադրանքի իրացման իրավունքներ շնորհող նամակներ, որոնք մեր օրենսդրությամբ փաստացի նախատեսված չեն և հետևաբար հասկանալի չէ, թե ինչպես կարող են կիրառվել, առանց հասկացության պարզաբանման:

Եթե հեղինակները հենց այդպիսի ավտորիզացիոն նամակները ի նկատի ունեն, ապա դրանք ըստ իրենց էության որևէ իրավական ուժ չունեցող, հակամրցակցային պայմաններ ստեղծող տնտեսական գործիքներ են, որոնք ՀՀ օրենսդրությունով, այդ թվում, Գնումների մասին օրենսդրությունով նախատեսված չեն և հակասում են դրանց: Դրանց, որպես բժշկական պարագաների ձեռքբերման հիմք դնելը բերելու է կոնկրետ արտադրատեսակների մասով շուկայի մենաշնորհացման, քանի որ արտադրողները այդպիսի նամակ տալիս են միայն մեկ ընկերության, ինչն էլ իր հերթին բերելու է գների աճի: Եվ քանի որ պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների գները որոշում է առողջապահության նախարարությունը, գների այդպիսի բարձրացումը փոխհատուցվելու է վճարովի ծառայությունների գների բարձրացումով:

Կարևոր է նաև արձանագրել, որ ներկայումս գործող իրավակարգավորումների և ըստ էության մրցակցային շուկայի շնորհիվ տարիների ընթացքում էականորեն նվազել են բազմաթիվ բժշկական արտադրատեսակների գներ, որոշ դեպքում ընդհուպ մինչև տասնապատիկի չափով: Այս Նախագիծը հակառակ ուղղությամբ տանող գործընթաց է սկսելու:

Հատկանշական է նաև, որ Նախագիծը կարգավորում է ոչ միայն պետական սեփականությամբ բժշկական հաստատությունների գնումները, այլ բոլոր բժշկական կազմակերպությունների ձեռքբերումները, որոնք մատուցում են պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության եւ սպասարկման ծառայություններ և այդ ծառայությունների շրջանակներում տեղադրում են Նախագծի հոդված 1-ով սահմանված բժշկական պարագաներ, ինչն, ըստ էության, միջամտություն է այդ կազմակերպությունների գործարար գործընթացներին:

Ավելին, քանի որ այս Նախագիծը կարգավորում է միայն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության եւ սպասարկման

ծառայությունները, ստացվում է, որ այլ աղբյուրներից ֆինանսավորվող ծառայությունների դեպքում նման պահանջներ բժշկական արտադրատեսակները կարող են չունենալ, ինչը խտրական մոտեցում է բժշկական օգնության ծառայություններ ստացող մեր քաղաքացիների նկատմամբ: Նման խտրական մոտեցումը նաև արգելվում է ՀՀ սահմանադրությամբ, և ՀՀ օրենքները չպետք է հանգեցնեն նման խտրական վերաբերմունքի:

Առաջարկվող կարգավորումները առաջացնելու են խառնաշփոթ և ճգնաժամ համակարգում և չեն բերելու Նախագծի հիմնավորումների մեջ ներկայացված նպատակների իրագործմանը, քանի որ տարբերակված ձեռքբերումները վճարովի և պետապատվերով մատուցվող ծառայությունների համար խաթարելու են թե՛ բժշկական կազմակերպությունների ներքին և թե՛ մատակարար-գնորդ ընթացակարգերը սեփականության բոլոր տեսակի բժշկական կազմակերպությունների մոտ:

Նախագծում և դրա հիմնավորումներում ոչ մի կերպ բացահայտված չէ, թե ինչպես է տեղի ունենալու ներկայացված կարգավորումների վերահսկողությունը: Նույն բժշկական կազմակերպությունում տարբեր պացիենտների կարող է դրվել տարբեր մեխանիզմներով գնված բժշկական արտադրատեսակներ, և պետությունը որևէ կերպ արդյունավետորեն չի կարող վերահսկել, թե որ պացիենտին որ արտադրատեսակն է տեղադրվել, ավելին նույն պացիենտը կարող է ստանալ նմանատիպ ծառայություններ մի դեպքում պետական պատվերի շրջանակներում, իսկ մյուս դեպքում, որպես իր կողմից վճարվող ծառայություն:

Բժշկական արտադրատեսակների որակի հավաստման համար «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է բժշկական արտադրատեսակների ներմուծման կարգի ընդունում: Այդ կարգի կիրառումը պետք է ապահովի միատեսակ պայմաններ ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում կիրառվող բոլոր, այդ թվում ներպատվաստվող արտադրատեսակների համար և բարձրացվող խնդրի լուծման եղանակը դա է: Սակայն քանի որ կարգը այս պահին ամբողջությամբ չի գործում, միայն «բժշկական արտադրատեսակի յուրաքանչյուր սերիայի (խմբաքանակի) համար որակի համապատասխանության հավաստագրի, եթե կիրառելի է, կամ արտադրատեսակի որակը հավաստող այլ փաստաթղթի առկայության» պահանջի պահպանումը այն ձևակերպմամբ, ինչպես նշված է վերոնշյալ կարգում, կարող է ժամանակավոր լուծում տալ բարձրացվող խնդրին՝ մինչև նույն է առաջացնելով վերը թվարկված խնդիրների մեծ մասը, մինչև այդ կարգի ամբողջական կիրառումը, որից հետո հետո արդեն իմաստ չի ունենա Նախագծով առաջարկվող կարգավորումները:

Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետները անհրաժեշտ է հետաձգել, քանի որ հարյուրավոր բժշկական հաստատություններ և ներկրողներ արդեն իսկ ունեն ներկրված և ձեռքբերված ներպատվաստվող բժշկական արտադրատեսակներ, որոնք չեն համապատասխանում Նախագծով առաջարկվող կարգավորումներին և հետևաբար համակարգը կարող է կանգնել տնտեսական և բժշկական կոլապսի առաջ:

Նախագծի հիմքում դրված չէ որևէ իրական վիճակագրություն, հասկանալի չէ, թե երբ և ինչ պայմաններում է ծագել դրա ընդունման անհրաժեշտությունը: Նախագծի հիմնավորումների մեջ բերված որոշ տեղեկություններ հասկանալի չեն և չեն համապատասխանում իրականությանը: Նաև հասկանալի չէ, թե ինչու պետք է այս կարգավորումը տարածվի բոլոր ներպատվաստվող բժշկական արտադրատեսակների վրա, եթե դրա հիմնավորումների մեջ ավելի շատ հղումներ կան սրտաբանության մեջ կիրառվող արտադրատեսակներին:

Նախագիծը պարունակում է նաև կոռուպցիոն ռիսկեր, քանի որ պետական բժշկական կենտրոնները կարող են բժշկական արտադրատեսակների գնումների իրենց տեխնիկական բնութագրերը կազմել իրենց նախընտրելի արտադրանքի համար, որն այս Նախագծի ընդունման դեպքում կհանգեցնի միայն մեկ կազմակերպություն մասնակցության և հաղթանակի: Ըստ էության, պետական բժշկական հաստատությունը սրանով ուղղակիորեն կորոշի մատակարարին՝ գնումների գործընթացը դարձնելով կեղծ: